ՌԴ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

19.01.2022 18:41

2022թ-ի հունվարի 19-ին Ռուսաստանի Դաշնության տարբեր շրջաններում գործունեություն ծավալող մի շարք փաստաբաններ, «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան» խորագրով վերապատրաստման շրջանակում, այցելեցին ՀՀ փաստաբանների պալատ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ողջունելով ռուս գործընկերներին, նշեց, որ բարձր է գնահատում ինչպես ՌԴ փաստաբանների ֆեդերալ պալատի, այնպես էլ անհատ գործընկերների հետ հարաբերությունները: Նա հյուրերին ներկայացրեց ՀՀ փաստաբանների պալատի կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների՝ մասնավորապես, Հանրային պաշտպանի գրասենյակի, Արագ արձագանքման հանձնախմբի գործունեության առանձնահատկությունները, Փաստաբանական դպրոց ընդունվելու, ավարտելու և փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու կարգը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին երկու երկրների փաստաբանական ոլորտում առկա խնդիրները, ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերում կատարված կամ նախաձեռնված փոփոխությունները:

Հյուրերն այցելեցին նաև ՀՀ փաստաբանական դպրոց, որտեղ նրանց հյուրընկալեց դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը: Վերջինս ներկայացրեց փաստաբանական դպրոցի առաքելությունը և ուսուցման կազմակերպման գործընթացը:

Հանդիպումն ամփոփվեց ՀՀ Փաստաբանների պալատի վարչական շենքում կատարված շրջայցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆԵՐԻ ՊԱԼԱՏ



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })